

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/3**

**27 հունվարի 2015 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Նարինե Աբրահամյանի 26.12.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 12.12.2014 թ-ի թիվ 6103622 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Նարինե Աբրահամյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Նարինե Աբրահամյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ ք.Գյումրի, Տիգրան Մեծի 3/3 հասցեում իրականացնում է մանրածախ առևտուր:

28.11.2014 թ-ին երկու անձինք, որոնք ներկայացել են Գյումրու հարկային տեսչության աշխատակիցներ: Վերջիններս նախ պահանջել են տեսնել ՀԴՄ սարքը, ապա հանել են Z հաշվետվությունը: Այնուհետև, Թ.Սարգսյանը գրպանից հանել է եղունգի լաքը և հայտնել, որ այն գնվել է վերը նշված հասցեում գտնվող խանութից, սակայն գնված ապրանքի դիմաց գնորդին կտրոն չի տրամադրվել:

Գանգատաբերը հայտնում է, որ նման տեսակի ապրանք խանութում երբևէ չի վաճառվել և տվյալ գնումն իր մոտից չի կատարվել:

Մի քանի օր անց գանգատաբերը հարկային տեսչությունից ստացել է նամակ, որի համաձայն իրեն ներկայացվել է ստուգման հանձնարարագիր և ակտի նախագիծ, որը ստորագրելուց իբրև գանգատաբերը հրաժարվել է, սակայն նման բան չի եղել:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է հարցին տալ դրական լուծում:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ պետի 13.11.2014 թ-ի թիվ 6203359 հանձնարարագրի Ա/Ձ Նարինե Աբրահամյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 25.11.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6203359 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

Ֆիզիկական անձ Արաքսի Վարդանյանի կողմից 25.11.2014 թ-ին, ժամը 17:50-ին Ա/Ձ Նարինե Աբրահամյանին պատկանող ք.Գյումրի, Տիգրան Մեծի 3/3 հասցեում գտնվող խանութում կատարվել է հսկիչ գնում 500 դրամի չափով: Գնվել է մեկ հատ եղունգների լաք 500 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարված կանխիկ գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 18:00-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն 600 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Կատարված վճարման արժեքը՝ 500 դրամը, ժամը 18:01-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 500 դրամ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ

կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ պետի կողմից 28.11.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6103622 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Նարինե Աբրահամյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 12.12.2014 թ-ի թիվ 6103622 ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը և գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնամբ ձեռք բերված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 18:00-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 18:01-ին կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը 500 դրամ ընդհանուր գումարով:

Ուսումնասիրությունն իրականացնող անձինք փորձել են ետ վերադարձնել ֆիզիկական անձ Արաքսի Վարդանյանի կողմից գնված մեկ հատ եղունգների լաքը, սակայն Նարինե Աբրահամյանը հրաժարվել է այն ետ ընդունել՝ պատճառաբանելով, որ այդ ապրանքն իր մոտից չի գնվել:

Ուսումնասիրությունն իրականացնող անձինք նշեցին նաև, որ վերը նշված եղունգների լաքը վաճառել է Ա/Ձ Նարինե Աբրահամյանի դուստրը, որն ընդունել է գնված ապրանքի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը, սակայն երբ ներկայացել է Ա/Ձ Նարինե Աբրահամյանը (որից հետո նաև վերջինիս ամուսինը), վերջիններս սկսել են պնդել, որ նման գնում իրենց մոտից չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են Ա/Ձ Նարինե Աբրահամյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ս Է՝

ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 12.12.2014 թ-ի թիվ 6103622 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

